

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Պատրաստողացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթ:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿԸ ՀՐԵՏԱՐԵՎՈՒ ԵՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէ հե-
տեակ օրերէն:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵՎԵՆ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ (ՄՇԵՎԵՐԻ) տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԲԵՐԻՆԵՐԻ մէջ:

ԵՆՈՒՆՁԻՆ ՀԵՄԵՐԵՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատոր:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեակ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԹԻՒՆ

Թանգութիւնը երևանում է յետ քին տեսնու-
թիւն: Նամակ Համալիկից: Նամակ խմբագրին:
Երբքին լուրերը—Արտաքին տեսնու թիւն:
Գերմանիա: Սերբիա: Եգիպտոս: Անգլիա: Արտա-
քին լուրերը—Ալալիս հեռագրիները: Յայտարա-
րութիւնները: Բանասիրական, Բողոքացալի
կամ բզացալի: Ղիֆտերիտ կոչված տեսակը:

ԹԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԵՐԵ- ԻԱՆՈՒՄ

«Մշակի» այսօրվայ համարի
ներքին լուրերում ընթերցողը կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՎԱԶՍԱՅԻՆ ԿԱՄ ԲԿԱՅԱՒԻ

Դիֆտերիտ կոչված տեսակը

Քանի որ չը կայ մեր աղգի, ապա և մեր գրա-
կանութեան մէջ բժշկական և այլ գիտութիւններ,
պարտք կայ մասնագէտ անձանց վրա որ նորա
ժողովրդականացնեն գիտութիւնները, գոնեա մա-
սամբ, մասնաւոր երբ այդ վերաբերում է այն
մասնիկին որոնք օրվայ առաւել ևս կենաց և
մահու հարց են դառնում: Խօսքս այս անգամ
դիֆտերիտ ցաւի մասին է: Կոկորդացալի
այդ ամենաշար տեսակը դարերով հնձել է և
սաստկութեամբ շարունակում է հնձել զլիսաւորա-
պէս մարդկութեան մատղաշ սերունդը:

Այս րօպէտում, երբ ևս գրում եմ այս տողերը,
այդ ցաւը դրօնում է Ռուսաստանի զանազան
անկիւններում և հիւսիսային Պետերբուրգում ու
հարաւային Ստաւրապօլում, Տիֆլիսն ևս մասամբ
վարակած է: Կան ցաւերի շատ տեսակներ, ո-
րոնք միշտ ունենում են գոյութիւն, բայց շատ
քաղաքավարի կերպիւ, խնայելով միշտ մարդկե-
րանց կեանքը, բայց որոնք յարմար դէպքերում

կարգայ Երևանի մեր մասնաւոր
Թղթակցից ստացած հեռագիրը,
թէ կառավարութիւնը թոյլ է
տուել հացի արքունի պահեստնե-
րից բաժանել Երևանի կարօտեալ-
ներին ցորենի մեծ քանակութիւնը:

Դորանից երևում է թէ որքան
օգտաւէտ է ծանր րօպէսներում
ունենալ հացի պահեստներ, որով
կարելի է օգնել նեղ դրութեան
մէջ ընկած ժողովրդին:

Մենք շատ անգամ ասել ենք

անխնայ կերպիւ կոտորում են մեծ բազմութիւն:
Ահա այդ տեսակ ցաւերին է պատկանում զիֆ-
տերիտը և սաստկանալու ժամանակը այդ և իւ-
րանման ցաւերը երևում են իրանց սահմանից և
արշաւում են միւս երկրները: Դիֆտերիտը մերթ
թոյլ և մերթ սաստկի է տարածվում, մերթ սա-
կաւ, մերթ շատ է սպանում: Ահա այժմ Ստաւրա-
պօլում 100 հիւանդացածից 75 է գերեզման տա-
նում, այն ինչ Տիֆլիսում—36-ը:

Այս մի քանի խօսքերից տեսնում ենք, ուրեմն,
թէ ինչ թշնամու հետ գործ ունենք, երբ լսում
ենք զիֆտերիտի անունը: Հայ ժողովուրդը, գո-
նեա թիֆլիսեցիք, երևանցիք և ալաշկերտցիք, կը
համարձակւոյ կարծել որ և միւս տեղերի հայերը
հասկացողութիւն չունեն այդ ցաւի մասին: Տըֆ-
լիսումը այժմ, թէ և շատ թոյլ, այնուամենայնիւ
կայ այդ ցաւը: Այլ և ձախ հարցեր եմ լսում այդ
ցաւի ընտանորութեան մասին և այն այնպիսի ան-
ձինքներից որոնք մասին չէին կարծիլ թէ չը գիտեն
այդ: Անցեալ տարին Երևանի հայ և թուրք բնա-
կիցները մտորած չված էին մտածել՝ ՎՏԵՐ Աս-
տուածն ասում էին նորա, ՎՏԵՐ չը տեսնված
ցաւ էր, էս էլ մեր մեղաց պատժն էր, անցկա-
ցած տարին պատերազմը՝ հիմի էլ էս անօրինակ
ցաւը: Ալաշկերտի գաղթականները մի առանձին
խորհրդաւոր կերպիւ էին ինձ մօտ բերում այդ-
պիսի հիւանդներին, որոնց թիւը բազմաթիւս
սակաւ էր, աչքները չափ, պղծած հիւանդի վրա
ցոյց կըտային, թէ՛ Վարդես, հանգա խիւանդ, է-
դօր բողոքացաւ մը կոխերա, ուսեր—մնացեր ա,
կը խղիղէ: Կոկորդի զիֆտերիտը զլիսաւորապէս
երևանացի ցաւ է, թէ և մեծերին էլ չէ խնայում:
2—8 տարեկանը, ահա զիֆտերիտի ընտրած հա-
սակը. 8—17 տարեկան հասակը համեմատաբար

մեր յօղուածներում, թէ մեր հա-
սարակութիւնը ամեն բանի մէջ
տէրութեան կողմից օգնութեան
է սպասում, իսկ ինքն ոչինչ գոր-
ծի մէջ սեփական ինիցիատիվ չու-
նի:

Հատ լաւ է որ կառավարու-
թիւնը այդ տեսակ ծանր դի-
պուլտներում օգնում է ժողովր-
դին, բայց նոյնը կարող էր անել
և ինքն հասարակութիւնը, եթէ
առաջուց մտածէր, եթէ առա-
ջուց ընդունէր այն մտքերը, որ
մենք տարիներով բարոյում ենք:
Մենք միշտ յայտնել ենք գիւղա-
կան և քաղաքային փոխառու ըն-
կերութիւններ հիմնելու անհրա-
ժեշտութեան միտքը, առաջարկել
ենք գիւղական արդիւնաբերող ըն-
կերութիւններ հաստատելու և այդ
ընկերութիւնների համար քաղաք-
ներում սեփական մթերանոցներ
կամ պահեստներ ունենալու միտ-
քը:

Եթժ կառավարութիւնն է օդ-
նում ժողովրդին իր սեփական,
արքունի պահեստներից ցորեն
բաժանելով, բայց կառավարու-
թիւնը միշտ չէ կարող նոյնը ա-
նել: Ինչի հասարակութիւնը ինքն
չէ մտածում իր սեփական պա-
հեստներ ունենալու մասին, ի՞նչի

շատ ազատ է, այդ ցաւից ինչպէս և մի տարեկան
հասակը և մեծ հասակը:

Դիֆտերիտը կարող է կոչել կլանի (դիւզակն,
բողազին, կատկին) և կոկորդին (խրթաւուկ),
աչքին, քթին, աղիքներին, և այլն, և արդէն պատ-
րաստ վերքերին: Մեր խօսքը կը լինի կլանի և
կոկորդի զիֆտերիտի մասին: Դիֆտերիտը կաղ-
մուածքի ընդհանուր ցաւ է և իր դոյութիւնը ար-
տապատում է, ինչպէս տեղական ցաւ: Կլանի
զիֆտերիտը սկսվում է հետեակ կերպիւ: Վերք-
ները երբ տարեկան երեխայ, որ կարող է իր
ցաւը բաւականաչափ բացատրել:

Երեխան յանկարծ դողացնում է և ընկնում է
տաքութեան մէջ. ջերմը կարող է սկսել և ա-
ռանց դողի: Մի քանի ժամից կամ մի օրից յետոյ
բողազացաւ է դրում, թուրք կամ կերակուրը
կուլ տալուց բողազը ցաւում է, այդ ցաւը երբեմն
ականջներին է խփում, ծակում է ամեն մի կուլ
տալուց: Բերանը բաց ևս անում, դրդալով ընդուն-
ները և հուլ տալիս, տեսնում ես որ փափուկ
քիւլը (զամաղը, լեղուակը, կաթիլը, նշախուլը)
և կլանը (բողազը) սաստիկ կարմրած են, ալ կար-
միւր և կամ մուգ կարմիր են փայլ ինչ ուռած են,
տեղ տեղը կարծես փայլում է ուռչելուց ու տեղ-
տեղ երևում է սպիտակ փառեր, գործարարի փա-
ռի պէս (ոստայն). բերանը ողողելուց կամ փա-
փուկ մաղէ կամ թելով ինձած վրձնով քսելուց,
այդ փառերը շին ոչնչանում, իսկ եթէ որ և իցէ
կերպիւ ոչնչացնես այդ փառերը՝ չուտով նոցա
տեղը նորից կը գոնես: Հէնց առաջին օրը ջերմը
կարող է հասնել 39—40 և աւելի աստիճանի
(ընտանը 36½—37½) երեկոյանները սովորա-
բար ջերմը սաստկանում է, զիֆտերիտը կարող է
լինել հեշտ կամ ծանր: Հեշտ տեսակը այսպէս կա-

այդ մասին չէ մտածում քաղա-
քային վարչութիւնը:

Ինչ որ այժմ անում է կառա-
վարութիւնը, նոյնը կարող էր ա-
նել ինքն հասարակութիւնը, հիմ-
նելով ցորենի իր սեփական պա-
հեստներ և գիւղական արդիւնա-
բերող ընկերութիւններ, որոնք
անմիջական կապեր ունեւոյլ քա-
ղաքների հետ և այդպիսով առաջն
առնելով զանազան հարստահա-
րողների և չարչիների անիրաւ և
հակահասարակական վարմունքնե-
րին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԱՐԻ 38

30 նոյեմբերի

Այս գիւղի խառվասեր ժողովրդից վարուց, բա-
րուց և այլ զանազան կէտերի վրա շատ անգամ
անաչառ. ճանապարհորդները հրապարակա խօսել
են. այդ պատճառով ես մի և նոյնը կրկնելու
և այդ գիւղի զանազան տեսակ կեղտոտութիւն-
ները նկարագրելու ժամանակ չունեմ: Ես կամե-
նում եմ ցաւը սրտի մի երկու խօսք ասել այդ
գիւղի անմիջական, անաչառ և անպատու դպրոց-
ների ներկայ դրութեան վրա: Այս, դպրոցների,
որովհետեւ համակցից չը բաւականացան միայն

բող է սկսվել երեխան անորժակը կորցնում է,
թուլութիւն է դրում, խաղից ընկնում է,
փառ ինչ ջերմում է, կարող է և ոտը
վրա, կուլտալուց բողազում ցաւ է դրում,
այդ պատճառով գլուխը ցածրացնում է և
երեսը կնճռոտում: Բերանը բացալուց կը տես-
նուի բողազի զանազան մասերի վրա սաստիկ
կարմրութիւն. տեղ տեղ գուցէ սպիտակ կէտեր,
փառեր: Շնոթի (չանի) տակին խել են դուրսում
Մի քանի օրից յետոյ երեխան կարող է առաջ-
ջանալ, հետոհետէ փառերը վեր են թափվում,
ջերմը պակասում է, երեխան ուժի է գալիս:

Դիֆտերիտի ծանր տեսակը երեխային իսկոյն
անկողնից կը պցի, սաստիկ ջերմը, որի հետ միա-
ցած է նշաւութեան և սրտի զարկերի յաճախելը,
թուլութիւն, զլիսաւոր, անորժակի կորուստ—
կուլ տալուց, աւելի կարծր բանիկ—սաստիկ
ցաւ, ականջներում ծակոց, ներքին ծնօտի տա-
կին խելը, ականջախուլի մեծանալը—ահա զիֆտե-
րիտի սկիզբը: Բողազի մասերի վրա նկատելի է
կարմրութիւն, փառեր, որոնք սպիտակագոյն են,
դեղնագոյն կամ մոխրագոյն, լեղուակը (դիւզակը)
օրինակ հաստացած է, երկայնացած է, սպիտակ
—դեղնագոյն կամ մոխրագոյն հաստ փառով,
կարծես թարախով (ծանր, չիւք, դալով) ծածկված
—նոյն դրութեան մէջ է և նշախուլը (չեղուակի)
դիւզակի կողքերին, և նրան չընկալաւոր փառա-
գութեան թաղանթները—ծնօտի տակին մեծացած
խելը ծեռք տալուց ցաւում են: Եթէ հիւանդու-
թիւնը սկսում է արագ քայլերով հիւանդին դէպի
մահը տանել—ջերմը սաստկանում է, զիֆտերի-
տով վարակված մասերը աւելի լցվում են, երբեմն
փոփում, մեռնում և վերթափում, փառեր տեղ
տեղ արնոտվում, մոխրի գոյն ստանում, ուռչում

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Ներքին գործերի մինիստրութեան բերդ-
ժէտի վիճաբանութեան առիթով պրուս-
կան պատգամաւորների ժողովը ստիպեցաւ
գերմանական Կառն կայսրացած նստի ժամանակ
զբաղվել բանտերի վարչական խնդրով:

Պ. Լեւտովից—Շտէյնկերի, նկատելով որ
պատժի հետգնեւթ թելթեանալու պատճա-
ռով, աւելանում են յանցանքները, պահանջեց
որ պատժները յիշատի պատժ լինեն:

Պ. Բէրքէ պահանջեց իմանալ այն հետա-
խուզութեան հետեանքը, որով կամեւում էին
բանի աշխատութիւնները կամաւոր աշխա-
տութիւնների փոխելով մեղմանցնել նրանց:

Պ. Վինդթորտ յայտնեց, որ ինքը համակ-
րում է պատժի սկզբունքներ, որովհետեւ պատ-
ժի երկուդն ուղղում է յանցաւորներին, սրա-
նից յետոյ նա պահանջեց, որ քաղաքական
յանցաւորներին բաժանեն միւս մեղադարտ-
ներէից, և նրանց հետ աւելի յաւ վարվեն:

Բանտերի վերադասուէ պ. Սորոսէր աջա-
կողմեաններ ծափահարութեամբ յայտնեց,
որ գլխաւորապէս ժամանակակից հիւանդոտ
մարդասիրութիւնն է պատասխանատու այն-
քան չարիքներին, որոնք կատարվում են ներ-
կայումս: Նրա կարծիքով մի քանի դիպուած-
ներում մինչև անգամ անհրաժեշտ է ծեծի
պատիժը, մանաւանդ որ ներկայումս յանցա-
ւորներին ուղղել մեծ նշանակութիւն է ստա-
նում: Նրա կարծիքով լոյ բանտարկութիւնն
արգելք է լինում բանտերին մեղադարտների
ուսումնարան լինել:

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից հաղորդում են Ֆրանսիական
«Corresp. Polit.» լրագրին, որ իշխան Միլանը
ընդունեց Ֆրանսիաների մինիստր պ. Խոմանո-
վիչի հրաժարականը: Նախկին նախագահ-մի-
նիստր պ. Մարինովիչ փարիզում լիազոր
մինիստր է նշանակվել:

Սերբիական սկուպլինայի յանձնաժողովն ըն-
դունեց այն ծրագիրը, որով կամեւում են
զահական ձառն առիթով մի պատասխանա-

կան աղբէս ներկայացնել. աղբէսը համակրա-
կան է կառավարութեան:

Բէլգրադի մի քանի մասնաւոր թղթակից-
ներ հաղորդում են զանազան լրագրներին,
որ պ. Մարինովիչի հակառակորդները
Սերբիայում նրա դէմ զանազան խտրիքներ
են լարում: Բայց մի և նոյն թղթակիցները
կասեցին, որ յայտնում, որ դժուար թէ նրանց
կարելի լինի յաջողանալ իրանց դիտաւորա-
ւորութիւնները, որովհետեւ պ. Մարինովիչ վայե-
րում է առաջին իշխանի և ընդհանուր սէրն
ու համակրութիւնը:

ԵԳԻՊՏՈՍ

Ներկայումս քաղաքական հորիզոնի վրա
մի ան փոփոխել է նշանակում: Նրա գործերը
Հաբէշտանի հետ շատ խնամքով գրութեան
մէջ են: Իսլամաւոր շէյխը հաղորդել է խե-
ղիկին, որ իր գնդի առաջնորդներից երկուսը
չեն կարողացել թողաւորութիւն ստանալ
Գորգոն-փաշայից, որպէս զի շէյխն նամակ-
ները յանձնեն նրան, և որ ինքը շէյխը բա-
տիպել է իր քաջիկ Հաբէշտանի Գուրանա-
հանգին նահանգապետի առաջ խաղաղութեան
ձառնով: Մի և նոյն շէյխը հաղորդում է, որ
Յովհաննէս թագաւորը բանակի հետ միասին
գտնվում է Գալաթայից միայն հինգ օրվայ
ձանապարհ հեռավորութեամբ: Սէնհատի և
գիպոսական օգնիկները նոյնպէս մի և նոյն տե-
սակ լուրեր է հաղորդում:

Այս լուրերը լսելով, որոնք յայտնի ապա-
ցոյց են, որ Յովհաննէս թագաւորը կամեւում է
է պատերազմի հրաւիրել Ներկայումս, երկու-
տական միմեկնորան խորհրդարան ժողովի-
ցան, և խեղիկը հեռագրեց Սուլթանի զօրե-
րի գլխաւոր հրամանատարին, որ նա Հաբէ-
շտանի սահմանագիծի վրա գտնված բոլոր
բերդերն ու ամրոցները պաշտպանողական
զինքն մէջ դնէ, ինչպէս և Մասսուհա աւա-
նայի, և պաշտպանվի երբ հարէնքը յար-
ձակվեն նրա վրա:

Երկրի հեռագրին ստանալուն պէս, և
գիպոսական զօրերին իսկոյն առաջ խաղացին
դէպի սահմանները:

Մի քանի լրագրներ կարծում են, որ Ան-
գլիան է լարել այս մեքենան: Հաբէշտանը
նոյնպէս Հնդկաստանի ձանապարհի վրա է...

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի մէջ բնակվող իրանդաղիք բողոք
տուն կառավարութեանը և խնդրեցին, որ
շուտով բաւականութիւն տրվի նրանց բողո-
քին, ահաւանակի այդ բողոքի պատճէր, որ
մենք քաղաքում ենք բէլգիական «Indep Belge»
լրագրից:

Լոնդոնի սենեակ դնել—նրա թուրք, խլիքը և ա-
մին արտաթորութիւնները հաւաքել առանձին շո-
բերի մէջ. ինչ որ կարելի է այլը—լաւ է այլը,
ինչ որ չէ, խոր թաղել հողի մէջ և երեսանց կիր
ածել, ու նորից հողով ծածկել. հիւանդին մօտի-
շունչ չառնել, բերանը և թիթը նրա բերնի և թիթի
դէմը չը բռնել—մի փուշտալով, մի հաղալով վա-
րակաճածը կարող է դիֆտերիաի արժանացնել:
Հիւանդի կրակալի անօթները առողջներ համար
գործ չը դնել: Սենեակի օդը մաքրել, փոխել—
հէշք մի փոքր լաւ եղանակ լինի թէ չէ—(մրսե-
լուց զգուշանալ) լուսամուտները բանալ. մեռա-
ծին չը համբուրել—նրա զգեստը չը պահել, ոչնչ-
ացնել: Գլխիկը եկեղեցի չը դնել, այլ խլիքին
և շուտով տանիքը վերցնել գերեզմանատունը տա-
նել—խոր թաղելուց յետոյ, նախ չը մեռցած կիր
ածել դաղաղի վրա և յետոյ հողով ծածկել: Տօնը,
մանաւանդ հիւանդի սենեակը մաքրել, եթէ գիւ-
ղացու տունը հողէ յատակ ունի, երեսանց հողը
վերցնել հողաւոր թաղել, իսկ տան յատակը նոր
հողով ծածկել:

Եթէ ցար սկսում է փոքր ի շատ սաստկանալ,
քաղաքի կամ գիւղի հասարակութիւնները պէտք է
իրանց հոգսը բաշխեն: Բաւական չէ սպասել կա-
ռավարութեան հոգատարութեանը և կամ նրա
հրամաններին: Միասին ժողովուրդն և հարկաւոր
եղած կարգադրութիւններն անեն: Այն աներկ
վրա, որոնք բուն են դարձել դիֆտերիաի, մեծ
ուշադրութիւն դարձնեն—նրանց մարքեն, չը լինի
թէ հասարակական խմելու ջուր անցնի այն
աներկը (ինչպէս այդ երևանում էր թուրքերի
թաղիքը, նրանց աներկը մտնում էր և ցարդ մը-
տնում է հայերի համար խմելու ջուր): Գլխու-
րիտով վարակուած գերդաստանի հետ իրանց դալ,

«Մենք» Լոնդոնի մէջ բնակվող իրանդաղիք, բողոքում ենք
կառավարութեան բունած այն ընթացքի դէմ, որով նա միջամտութիւն է
գործում պ. պ. Նալիթ Ռէյլի և Նիլլէնի գոր-
ծերի մէջ, և դրանով վնասում է խօսքի ա-
զատութեանը և ընդդէմ է վարվում բրի-
տանական սահմանադրական օրէնքներին:
Մենք բողոքում ենք կառավարութեան դէմ
մեր հայրենիքի սահմանադրական ազատ օ-
րէնքների հիման վրա, և պահանջում ենք,
որ կառավարութիւնը յետ կենայ երեք բան-
տարկածներին հայածելուց:

Մենք կատարեալապէս համակրում ենք իր-
անդաղիական ժողովրդին, որ զոհ է տեսնա-
կան ճգնաժամին, և մենք էլ մի և նոյն կար-
ծիքն ունենք և համաձայն ենք այն մար-
հետ, որ ներկայ հանգամանքները ամենաան-
հրաժեշտ կերպով պահանջում են, որ անպատ-
ճառ այնպիսի վերանորոգութիւններ մտցն-
վեն, որոնք սեփականացնեն հողը երկրա-
գործ դասակարգին և մենք յայտնում ենք
որ այն թշուառութիւնները, որոնք ծանրա-
ցել ենք իրանդաղիական երկրագործ դասակար-
գի վրա, զրանց միակ պատճառը հողային
բաժանման այն սխառման է, որին պաշտ-
պանում է կառավարութիւնը յօդուտ միայն
քաղաքացիների մի փոքրամասն դասակարգի
և ի վնաս ժողովրդի ահաբեկ բազմութեան.
Վերջապէս մենք բողոքում ենք կառավարու-
թեան այն ձգտումների դէմ, որոնցով նա աշ-
խատում է ծնել բոլոր օրինաւոր և արդա-
րացի ցուցմանները, որոնք միակ միջոց են
նրան տալու իր արդարացի իրաւունքները:

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարաքաղաքի լրագրներին փարիզից գրում են
հետեւեալը. «Պատգամաւորների ժողովում պ. Լէ-
գրա» ասաւ, որ նա միւս յունիքին Կանաչ Գըր-
քի բաժանելուց յետոյ, հարց կառաւարկի հրեա-
նների գրութեան մասին իրաւունքները, այս քաղեկ-
նա հարցում է թէ կառավարութիւնը կարծում
է արդեօր իրաւունքային անկայանութիւնը ծանալու-
նալուց փոքր մասնաւորութեամբ և որ կառավարու-
թիւնը միշտ համակրութեամբ վերաբերվում է դե-
պի իրաւունքային գործերը: Բելգիայի կոնգրեսում ճը-
րանական գործում էր յօդուտ փոքրիկ ազգութեան.
Նրա օգնութեամբ իրաւունք է արգել իրաւունքային
ընդարձակել իր ցամաքը իր վարձատրութիւն ինս-
տարիայի փոխանակ: Օրէնսդրութիւնների ընտ-
րութիւնից յետոյ նշանաւոր եղաւկացութիւնների են
հասել: ճըրանական շարժանքում է բանակցութիւն-
ները այլ պետութիւնների համաձայնութեամբ,
որոնցից բաժանվել չէ կարող: Կարելի է յուսալ, որ
Իրաւունքային անկայանութեան ծանալուց կատարված
իրողութիւն կը լինի:

«Հավան ընկերութեան» Յէտինիէյից, գեկ-
տներին 10-ից հաղորդում են հետեւեալը. «Ելխան
Նիկողայսը վճռեց Գուստինի և Պրաւան նուա-
նիկ զէնքի զօրութեամբ, եթէ մինչև նշանակված
ժամանակը, այսինքն մինչև գեկտեմբերի 12-ը, այս
նշանակները իրան չեն յանձնվի: Ելխան Նիկողա-

յանը կարեն, եթէ դիֆտերիա, ինչպէս պատա-
հում է, յամառութեամբ կաշում է մի տան, քան-
դել, եթէ հնար է, այրել այդ տունը: Մեծ ուշադ-
րութեան արժանի հարց է այս ցար ուսումնա-
րանների վարչութեան համար, նրանք սուր
աչքով պէտք է դիտեն ցարի սկիզբը, նրա շար-
ժումը և ամեն մի շարժումը դէպքում հարկաւոր
եղած նախապաշտպանողական բերանացի կամ ե-
թէ հնար է գրաւոր խրատներ տալուց յետոյ,
ուսանողներին արձակեն: Ուսումնարանի դռները
քանի բաց մնան, այնքան դասատուները առա-
ւել ևս կը դարդակուին: Երբ հարցը կենաց և մա-
հում է, լուսաւորութեան զաղափարով ոստիկ
դրաւիլը վնասակար է և միանգամայն փարիսե-
ցութիւն:

Բայց երբ հիւանդութիւնը կաշում է երեխային
—ինչ պէտք է արած: Եթէ բժիշկ կա, իս-
կոյն բժշկին պէտք է դիմած: Այս, այս այն հի-
ւանդութիւններից մէկն է և կարող եմ ասել ա-
ռաւիյնն է, ուր բժշկին մի ժամ յաւաք դիմել
կենարդ և մի ժամ յետոյ դիմել մահ սանկ է: Բայց
յօդուածին նպատակը դնելով այն թէ, հասկացո-
ղութիւն տալ մեր ժողովուրդին դիֆտերիա տա-
րողազգացալի վրա արդի բժշկական գիտութեան
հայտնածներով, լրիւ կատարած չէ լինի իմ
պարզեղ ժողովրդի առաջ: Եթէ հիւանդութեան
պատկերի նկարագրութեան հետ զանալից ցոյց
տալ և մի քանի բժշկական պարզ միջոցներ, մա-
նաւանդ գործնականապէս գտնուած լինելով ժո-
ղովրդի մէջ նոյն այդ ախտի տարածուելու ժամա-
նակ և իմանալով մի կողմից ժողովրդի կամ
զալլաքներին և կամ պատասխանելով դիմելու թու-
լութիւնը և հաւատ չընծայել բժշկներին, կամ
այս վերջիններին դիմել միայն այն ժամանակ, երբ

յոք Բ. Գրան հաւատ չէ ընծայում և կարծում է
որ չը նայելով այն լրագրութեանը, որը տուած է
Մուխտար-փաշային, այնու ամենայնիւ Կ. Պոլսում
գիտաւորութիւն չունեն Բելգիայի կոնգրեսի համա-
ձայն բաւականութիւն տալ ջերմօգորիային: Ա-
սում են որ իշխանը հաղորդեց Բ. Գրան իր դի-
տաւորութեան մասին դէպի գորութեամբ նուաճել
անհաղանդ ալրանցներին:

ՄԵԼԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 դեկտեմբերի: «Слово»
ամսագիրը երկրորդ նախադրութիւն ստա-
ցաւ «Задача заподноевропейской цивили-
зации», «Современная Франция» և «Диа-
лектика в ее примѣненіи къ наукѣ»
յօդուածների պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 դեկտեմբերի: 48
ժամվայ քննադատվում Կարալի մօտ սատիկ
թերանթագրութիւն էր լսվում: Տեղիկաց-
նում են որ Մահաձեղ-խանը իր երեք որդուն,
Նախուր Մուսա-խանին էմիր հրատարակեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 դեկտեմբերի: «Сена-
токая Вѣдомости» լրագիրը հաղորդում է,
որ Մէնատին տուած Բարձրագոյն ուղարկով
հրամարկած է Բարձրեան նահանգի նահանգա-
պետ գեներալ-լէյտենանտ Անուշինին, որ նա
լինի արեւելեան Սիրիայի գեներալ-նահան-
գապետ, և այդ շրջանի զօրքերի հրամանա-
տար: Ճամբովեան նահանգը երկարակամ է
Մօսկվայի գեներալ-նահանգապետի իրաւա-
տութեանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 դեկտեմբերի: Կայսրու-
հու առողջութեան մասին դեկտեմբերի 11-ի
բւլլլետէնը հետեւեալն է. Փոքրի աշ կողով
պէշվիտի երկութը գրեթէ անհետացել է:
Իսկ դեկտեմբերի 12-ի բւլլետէնը հետեւեալն
է: Երեկվայ օրը Կայսրուհին դահացոյցի
կերպով անցկացրեց, յետոյ թէպէտ և սա-
կաւ, բայց անորժակով ծաղեց. դիչերը հան-
գիստ քնեց. բայց ժամը չորրից քունն ընդ-
հատվեցաւ հազով. երեկոյեան տաքութեան
աստիճանը 37,8 էր, իսկ երակի զարկը 96:
Այսօր առաւօտ ջերմութեան աստիճանը 37,9
է, իսկ երակի զարկը 116: Ստորագրեցին
բժշկապետ Ալեքսիեւիչ և Բօտկին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 դեկտեմբերի: Պետա-
կան բանկի 5% տոմսին առաջին շրջանի
արժէ 93 ր., երկրորդ 92 ր. 62 կ., երրորդ
93 ր. 5 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% ա-
ռաջին փոխառութեան տոմսին արժէ 229
ր. 75 կ., երկրորդ 255 ր. 5 կ., արեւելեան
առաջին փոխառութեան տոմսին արժէ 90 1/2
ր., երկրորդ 90 1/2 ր., ոսկի 7 ր. 88 կ.: Ուս-
տաց 1 րուրդ Լոնդոնի վրա արժէ 25 1/2 պէնս:
Տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

անգամ սրբերն էլ երես են դարձրել հիւանդից—
այդ մի կողմից և միւս կողմից այն թէ, որքան
պակաս է մեր ժողովրդի մէջ անգամ ամենապարզ
տարրական հասկացողութիւնները կանոնաւոր
բժշկութեան վրա: Մի հասարակ օրինակ հիւանդը
աշխատում է մի տեսակ առանձնաւոր բժշկի հետ
և երբ իր նպատակին հասնում է, երեսը ծածկե-
տելով, կարծես մի մեծ ողորմութիւն խնդրելով
զբժիշկ, ասում է— ծաղաւ պապակեցի, հրա-
մայիր որ ինձ ջուր տան, ես մեռայ և այն և
այն...

Յօդուածս գրած է ժողովրդի բանիմաց անհատ-
ների համար, ուրեմն նա կարող է պարունակել
իր մէջ միայն այն, ինչ որ մատչելի է նրանց. աւ-
բող յօդուածի վրա ես այդ աչքով եմ նայել:
Գիտութիւն ստացած հիւանդին օգնել կը նշանակի
նրա վերմը պակսեցնել, նրա ուժերը պահպանել,
գիտութիւն թոյնը ոչնչացնել արեան մէջ. բայց նախ
և առաջ նրա կանը կամ կոկորդը, կամ բերանը
ազատել, մաքրել և այն վառարկից, այն սպլտակ,
կամ դեղնազոյն և կամ մոխրագոյն կէտերից, ո-
րոնք սկիզբն են դիֆտերիաի:

Չը թողնենք և այն, որ երբեմն և շատ անգամ,
հիւանդները մեռնում են միմիայն նրանց որ կո-
կորդը մաքրանալու արդեան նեղանում է, որ
օդը մուտք չէ գտնում դէպի թոքերը. ուրեմն
բժշկութեան մի կենսատու շնորհ էլ պէտք է լինի
հիւանդին ազատել այդ սարսափելի բուռից:

(Կը շարունակվի)

*) Բժշկական գիտութեանը յայտնվել է, որ ամեն
անգամ երբ արտաթորութիւնը պարունակում է իր
մէջ յորձանք, թարախ և կամ դրանց հետ և ա-
րեւին, հիւանդութիւնը անպատճառ չը պէտք է
կոչել դիֆտերիա: Նոյն այդ նշաններով կա-
րող է լինել և հասարակ բորբոք կամ նոքո՝ Ka-
tarральная и дифтеритическая дизентея.

